

արեւմտեան թաղերէնք Լուս մեծաւորութիւն ունիւք ընդ Հայրութեանդ» (Դիւ. 1803 Փետր. 24): Յետոյ իր որդւոյն ծննդեան քուրթի հաւան բովանդակութիւնը տարով՝ կը գրէ. «Յակոբի որդի Տէօլվէթի որդի Գրիգոր Կէօջէֆեանց, ծնեալ ի Թուրքիա 1786 ի Սեպտեմբեր 9» (Դիւ. 1803 Փետրուար 24):

Ուրեմն՝ «Յակոբի որդի Տէօլվէթի Կէօջէֆեանց» 1803ին: Ո՞վ կընայ ըլլալ այս «Յակոբ Կէօջէֆեանց»ը, եթէ ոչ Կէօջէֆեան Գերգաստանի Ա. Տոմարցիւն «Բէօջէֆ 0ղլու Յակոբ»ը: Որով «Տէօլվէթ» կ'ըլլայ իր երրորդ որդին, այսինքն — Աստու, Սեդրակ, Տէօլվէթ:

Այս Տէօլվէթի մասին կը գտնենք հետեւեալ ծանօթութիւնները մեր Դիւանի մէջ.

1. Տէօլվէթ կրօնատէր է քարեպաշտ անձ մըն է, որ կ'ուրախանայ «լսելով ... զմարդէն մեր որդեկին յերկիրն Աստուծոյ առ քանակ զսէրն Աստուծոյ եւ զպարտաւորութիւն առ Աստուծոյ, առ մեծաւորս, առ խրատիչս եւ առ ծնողս...» (Դիւ. 1803 Փետր. 24):

2. Տէօլվէթ Կէօջէ 0ղլու վանատական է, իր գլխաւոր գործն ըլլալով «Բիշմիրի շալի» առեւտուրը, ինչպէս իր եղբայրը՝ Անտոն, որ նոյնպէս շալի վաճառական էր: Տէօլվէթ Հայթայթիչներէն մին էր Ղափուտան Հիւսէյին Փաշային, որ տարեկան 5-600 թոփ կ'ապսպրէր թէ՛ իր պալատին եւ թէ՛ արքունական նաւերուն համար: Թոփը կարծէր 4-5000, մինչեւ 6000 զուրուշ: Փաշային մեռնելէն (1800) վերջ շալերուն գինը անհաճախ կերպով կ'ընթաց, 1600 զուրուշնոցը՝ 2000, 5000 զուրուշնոցը՝ 1500 կ'ըլլայ եւ առ-

նող ալ չի գտնուիր: Անոնք որ շատ ապրանք ունէին՝ կը կործանէին: Տէօլվէթ անոնցմէ մին էր, կը գրէ պոլսական նամակ մը (Դիւ. 1805 Մարտ 26):

3. Տէօլվէթի ընտանեկան կեանքին ծանօթ են. ա) իր տունը Օրթաֆէօյ էր. բ) ինքը ամուսնացած էր. գ) ունէր «որդի», որոնց զաւակու տար 1804ի ամառը Յովհաննէս վարդապետ. «Յայսմ ամի եղանակի ամառան Տէօլվէթ Աղայի տունը գնացի յՕրթաֆէօյ առ ի վարժել զորդիսն», կը գրէ նոյն վարդապետը (Դիւ. 1804 Մայիս): Իր զաւակներէն միայն Գրիգոր ծանօթ է անունով, որ՝ ինչպէս տեսանք, ծնած է 1786 Սեպտ. 9ին եւ 1802ին մտած Տրիեստի մեր Գիշերօթիկ վարժարանը, ուսկից Պոլիս կը վերադառնայ 1805ին (Դիւ. 1805 Մայիս 4, 11): Տէօլվէթ ունէր աղջիկ մը, որ 1804ին կը պսակուի (Դիւ. 1804 Յունուար 24): — Անծանօթ է Տէօլվէթի եւ իր ընտանեաց մահուան թուականը: Մեր կարծիքով Տէօլվէթ՝ Յակոբ Բէօջէֆեան անդրանիկն էր եւ իր անունը կը կրէր իր պապը, այսինքն՝ Կէօջէֆեան Գերգաստանի նախահայր նահապետը:

II. Բէօջէֆ 0ղլու Յակոբ ունեցած է նաեւ աղջիկ մը, որ հարսնացած է Պէնկիւնանց երունի եւ ունեցած Անտոն անունով մանչ մը, որ 1802ին Տրիեստի մեր վարժարանի աշակերտ է եւ Տէօլվէթ Բէօջէֆեան մեր Հ. Պօղոսին գրած նամակին մէջ կ'աւելցնէ. «Ողջունեմք զորդեակն մեր Գրիգորն եւ զԲեռդին մեր զԱնտոնն» (Դիւ. 1803 Հոկտ. 24): Այս «բեռդի» բառէն կը հասկնուի թէ Տէօլվէթ քոյր մը ունէր, իսկ Բէօջէֆ Յակոբ՝ աղջիկ մը:

(Շարունակելի):

Հ. Ե. ՊՕՂՈՍԵԱՆ

Ն Ո Ր Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

(Ողորդուած Խմբագրութեանս):

Արքահամեան Ա., Հայ Ժողովուրդի Պատմութիւն: Պրակ Բ, Հայաստանը վաղ Քէօղալիզմի շրջանում: Երեւան, Հայպետհրատ. 1959, 8°, էջ 206:

Աղաքաբեան Ս., Գուրգէն Մահարի: Երեւան, ՀԳԱ. Հրատ. 1959, 8°, էջ 152:

«Արձագանգ» — Հ. Բ. Ը. Միւլթիւն, Կիպրոսի մասնաճիւղներ: Պէյրուս 1959, տպ. Սեւան, 4°, էջ 29:

Բակունց Ակսել, Գրականութեան մասին: Երեւան, Պետհրատ. 1959, 8°, էջ 144:

— — Եղբայրութեան ընկուզները: Երեւան, Պետհրատ. 1959, 8°, էջ 183:

— — Ստեղծագործութիւնը — Յօդուածներ ժողովածու: Երեւան, ՍՍՍՐ ԳԱ. Հրատարակչ. 1959, 8°, էջ 296:

Դանթէ Ալիգիբի, Աստուածային Կառուկերութիւն, Դրախտ: Թարգմ. Ար.

Տայան: Երեւան, Պետհրատ. 1959, 8°, էջ XIII + 219:

Զաւարաբեան Թովմ. Պ., Ամբողջական բանաստեղծութիւնը եւ հատրիտեր գրուածք: Ֆիլատելֆիա 1959, 8°, էջ 108:

Թերգեան Մեսր. Ս. Վ., Բրդնիկի նախավկայ Առաքելը: Պէյրուս 1959, տպ. Կաթիլ. Տպարան, 8°, էջ 70: (Արտպ. «Աւետիք» Ամսաթերթէ):

Իրականութիւնը. Թիւ 21, Նոյեմբեր 1959: Պէյրուս 1959: 32°, էջ 8:

Հալսվերդեան Լ., Սուրէն Քօչարեանի արվեստը: Երեւան, Պետհրատ. 1959, 8°, էջ 222:

Համբարձումեան Գրիգ. Ա., Պրիմակ, երաժշտաւորի մը օրագիրը: Փարիզ 1959, 8°, էջ 208:

Հայրդի — Արմէնները: Թեհէրան 1956, տպ. Մոդերն, 8°, էջ 179:

Հայրեան Գեորգ, Ամերիկեան հանդիպումներ: Երեւան, Պետհրատ. 1959, 8°, էջ 96:

Ղազարեան Յովհ., Աղատ Վշտունի: Երեւան, ՀԳԱ. Հրատ. 1959, 8°, էջ 112:

Ղափան, Գրական Արմատիս, Թիւ 1: Երեւան, Հայպետհրատ, 1959, 8°, էջ 60:

Մահարի Գուրգէն, Հնձաններ: Երեւան, 1959, 8°, էջ 636:

Մախմուդով Ն. Խ., Քուրդ Ժողովուրդը. Համառօտ պատմական ակնարկ: Երեւան, Պետհրատ. 1959, 8°, էջ 258:

Մաքսիմ-Կուլի (Ֆրագի), Բանաստեղծութիւններ: Երեւան, Հայպետհրատ. 1959, 8°, էջ 132:

Մանուկեան Ալեք., Հ. Բ. Ը. Միւլթեան զիրքը ներկայ Հայ իրականութեան մէջ: Պէյրուս 1959, տպ. Շիրակ, 8°, էջ 21:

Մատաղեան Թորոս, Յուշամտեան Թամարայի: Պէյրուս 1959, տպ. Տօնիկեան, 8°, էջ 626:

Մելիք-Բաշխեան, Ս. Տ. — Յակոբեան Խ — Մեսրոպ-Մաշտոց. (Հայ Մատենադիրներ): Երեւան, Պետհրատ. 1959, 8°, էջ 60:

Մուստել Է. Ռ., Արեգակը եւ երկրի մթնոլորտը: Երեւան, Հայպետհրատ. 1959, 8°, էջ 128:

Յարութիւնեան Սուրէն, Միհրդատ Ամերիկեան: Երեւան, ՀԳԱ. Հրատ. 1959, 8°, էջ 207:

Յովհաննիսեան Գ., Նար-Դոս: Երեւան ԳԱ Հրատ. 1959, 8°, էջ 202:

Նալբանդեան Վ. Ս., Եղիշ: Երեւան, Հայպետհրատ. 1959, 8°, էջ 182:

Շահինեան Ա. Խ., Վերածննդի Ժողովուրդի Կուրտուրան: Երեւան, Պետհրատ. 1959, 8°, էջ 456:

ԿԱՐԵՒՈՐ ՈՒՂԱՆԻՐ

Թերթիս նախորդ միացեալ (Մայիս — Օգոստոս) թիւին Զ. Պատկեանի դրամագիտական յօդուածին մէջ, տպարանի կողմէ, պատկերներու զետեղումի ծանրակշիռ սխալ մը եղած է:

Պատկեր 1-ի մակագրութեան Լեւոն Ա-ը ուղղելու է Լեւոն Բ, իսկ պատկեր 3-ի Լեւոն Բ-ը ուղղելու է Լեւոն Ա: Կը խնդրենք, առ այս, մեր յարգելի աշխատակցին եւ ընթերցողներու ներողամտութիւնը:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Herausgeber, Eigentümer und Verleger: Mechitharisten-Kongregation in Wien, VII., Mechitaristengasse 4
Druck der Mechitharisten-Buchdruckerei — Für den Inhalt verantwortlich: P. Mesrop H a b o z i a n
Alle Wien VII. Mechitaristengasse 4